# ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

03.03.2016 10:28

ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակի թափուր հաստիքի համալրման նպատակով անցկացվող հարցազրույցին մասնակցելու համար դիմել են 16 թեկնածու: Թեկնածուների հետ հարցազրույցն անցկացվելու է անհատական կարգով: Հարցազրույցի անցկացման նպատակով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ ձևավորված ժամանակավոր հանձնաժողովը ստուգելու է նույն որոշմամբ թեկնածուների համար սահմանվող հետևյալ ***նվազագույն պահանջները.***

| № | Թեկնածուների համար սահմանված նվազագույն պահանջները | Ստուգման միջոցը |
|---|---|---|
| 2. | **Աշխատանքային փորձ**՝ *առնվազն երեք տարի հասարակայնության հետ կապերի կամ լրատվության ոլորտում.* | ***Աշխատանքային գրքույկի կամ այլ համարժեք փաստաթղթի հետազոտում*** |
| 3. | **Կրթություն**՝ *բարձրագույն (իրավագիտություն, լրագրություն, պատմագիտություն, հանրային կառավարում).* | ***Կրթության մասին փաստաթղթի (դիպլոմ, վկայական, հավաստագիր և այլն) հետազոտում*** |
| 4. | **Համակարգչային հմտություններ**՝ *MS World, MS Excel, MS PowerPoint, Photoshop, կայքէջի կառավարման CMS ծրագիր, ինտերնետի ռեսուրսներից օգտվելու հնարավորություն* | ***Windows օպերացիոն համակարգով և նշված ծրագրերի գործարկման համար անհրաժեշտ նվազագույն գործողություններ կատարելու հետ կապված առաջադրանքներ*** |
| 5. | **Գրավոր տեքստերի,** *այդ թվում՝ վերլուծական նյութերի կազմման հմտություններ.* | ***Իրավիճակային խնդիրներ՝ մամուլի հաղորդագրություններ և այլ հակիրճ նյութեր կազմելու առաջադրանքով*** |
| 6. | **Բանավոր** *հռետորական խոսքին տիրապետելու ունակություն:* | ***Թեկնածուի կողմից իր անձը ներկայացնելու, ինչպես նաև հանձնաժողովի հարցերին պատասխանելու ընթացքում բանավոր խոսքի գնահատում*** |

***Թեկնածուների հետ հարցազրույցն անցկացվելու է 2016 թվականի մարտի 4-ին, ժամը 10:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

## Առաջարկվող նորություններ

23.02.2016
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })